Ամանդա Սմիթի պատմությունը՝ Հոնս Միլ քաղաքից



1838 թվականի հոկտեմբերի 30-ին Միսսուրիի ամբոխները հարձակվեցին Վերջին Օրերի Սրբերի բնակավայրի վրա, որը հայտնի է որպես Հոնս Միլ: Ամբոխը կրակեց տղամարդկանց և տղաների վրա, որոնք մտել էին դարբնոց՝ ապաստան փնտրելու և իրենց ժողովրդին պաշտպանելու համար: Վերջին Օրերի Սրբերից տասնյոթ մարդ սպանվեց հարձակման ժամանակ և ավելի քան մեկ տասնյակ մարդ վիրավորվեց:

Վիրավորների թվում էր վեցամյա Ալմա Սմիթը, որի ազդրի ոսկորն ամբողջովին վնասվել էր կրակոցից: Ալմայի մայրը՝ Ամանդա Բարնս Սմիթը, հուսահատված էր, երբ գտավ նրան: Նա նաև սգում էր իր ամուսնու և իր 10-ամյա որդու համար, որոնք զոհվել էին հարձակման ժամանակ:

Ոչ ոք չկարողացավ օգնել նրան, Ամանդան հավաքեց իր մնացած երեխաներին և աղոթեց ուղղորդման համար: «Օ, իմ Երկնային Հայր,– աղոթեց նա, –դու տեսնում ես իմ խեղճ վիրավոր տղային և գիտես իմ անփորձ լինելու մասին: Օ, Երկնային Հայր, ուղղորդիր ինձ, թե ինչ անեմ»:

Երբ Ամանդան ավարտեց իր աղոթքը, նա լսեց մի ձայն, որը նրան հրահանգեց մոխիրը ջրի հետ խառնել: Այդ լուծույթը նա օգտագործեց Ալմայի վերքը լվանալու համար՝ մինչև այն մաքրվի: Այնուհետև, Ամանդան հուշում ստացավ պոկել թեղի ծառի արմատները և մանրացնել դրանք՝ դարձնելով մածուկ: Նա մածուկը դրեց Ալմայի վերքի վրա և փաթաթեց կտորով:

«Հիմա այդպես անշարժ պառկիր, – ասաց նա որդուն,– և Տերը քեզ համար ուրիշ ազդր կստեղծի»:

Ալմայի վերքը խանգարեց Ամանդային և նրա ընտանիքին տարհանվել հարձակումից հետո: Շաբաթներ անցան, ամբոխը վերջնաժամկետ սահմանեց նրա և մնացած Սրբերի հեռանալու համար: Ամանդայի վախը մեծանում էր, քանի մոտենում էր վերջնաժամկետը: Նա թաքնվեց եգիպտացորենի ցողունների մեջ՝ բարձրաձայն աղոթելու համար, որպեսզի իրեն չլսեն: Այնուհետև նա լսեց մի ձայն, որը կրկնեց այս խոսքերը.

Հոգուն, որ Հիսուսին է ապավինել հանգիստ առնելու,

Ես չեմ կարող թողնել իր ոսոխներին,

Այդ հոգուն, եթե նույնիսկ դժոխքը ողջ դողա,

Ես երբեք, ոչ, երբեք, նրան չեմ լքի, երբեք:

«Որքան ամուր է հիմքը» օրհներգի այս խոսքերն (*Հիմներ*, համ. 85) օգնեցին Ամանդային նոր ուժ և քաջություն զգալ:

Կարճ ժամանակ անց, երբ Ամանդան դրսում էր, տնից լսեց իր երեխաների բղավոցը: Նա շտապեց դեպի տուն և տեսավ Ալմային, որը վազում էր սենյակում: «Ես լավ եմ, մայրիկ, ես լավ եմ»: Նա լաց եղավ: Ամանդան և իր երեխաները շուտով հեռացան Հոնս Միլից:

(Մեջբերված և ամփոփված է *Սրբեր*, 1.347–50, 353–55, 378–79)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_413-1